ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՇ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/68

ք. Երևան «15» հոկտեմբեր 2019թ

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը»**, ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ժիլյո» Ա/Կ-ն**, ի դեմս տնօրեն **Սերժիկ Ավագյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՍՅՈՆՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Կողմերի միջև կնքվող ֆինանսական միջոցների առկայության մասին լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 110 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **6,400,000 (վեց միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 1,066,667 (մեկ միլիոն վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **1,600,000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը**, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ցուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում ինքնուրույն պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի՝ նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[3] ***Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա ինքնուրույն չլինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:***

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**[4]

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Ժիլյո» Ա/Կ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | ՀՀ, ք.Երևան, Բագրատունյանց 69 |
| ՀՎՀՀ 00846441 | ՀՎՀՀ՝ 02205353 |
| Հ/Հ 900018001231 | Հ/Հ՝ 115004610859 |
| Կենտրոնական գանձապետարան | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն |
| Աշոտ Կիրակոսյան | Սերժիկ Ավագյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« 15 » Հուլիսի 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱԵՀԲ-2019/68 ծածկագրով պայմանագրի

ՇԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ՝

## «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՍՅՈՆՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ»

### ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| ՀՀ | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չափման միավորը | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1. Աղբյուրակապ (տեխնոլոգիական մաս) | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | V կարգի գրունտների մշակում ձեռքով, կողալիցքով | մ³ | 2.0 | 21,582 | 43,165 |
| 2 | IV կարգի գրունտների մշակում ձեռքով, կողալիցքով | մ³ | 3.0 | 4,513 | 13,539 |
| 3 | III կարգի գրունտների մշակում ձեռքով, կողալիցքով | մ³ | 5.0 | 2,559 | 12,795 |
| 4 | II կարգի գրունտների մշակում ձեռքով, կողալիցքով | մ³ | 2.0 | 1,733 | 3,466 |
| 5 | Կավե լիցքի իրականացում ձեռքով | մ³ | 0.80 | 19,869 | 15,895 |
| 6 | Գլաքարի շերտի իրականացում ձեռքով | մ³ | 0.30 | 6,376 | 1,913 |
| 7 | Կոպիճի շերտի իրականացում ձեռքով | մ³ | 0.20 | 4,654 | 931 |
| 8 | Ավազի շերտի իրականացում ձեռքով | մ³ | 0.20 | 5,515 | 1,103 |
| 9 | Եռլիցք կողալիցքի գրունտներից ձեռքով | մ³ | 4.0 | 1,070 | 4,280 |
| 10 | Աղբյուրակապի թմբապատում կողալիցքի գրունտներից ձեռքով | մ³ | 8.0 | 1,070 | 8,561 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | | |
| 1 | Պողպատե էլեռակցվող խողովակներ DN89x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 5.0 | 5,266 | 26,330 |
| 2 | Պողպատե էլեռակցվող խողովակներ DN57x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 8.0 | 3,441 | 27,527 |
| 3 | Պողպատե DN89x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում | գծմ | 3.0 | 465 | 1,395 |
| 4 | Պողպատե DN57x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում | գծմ | 6.0 | 397 | 2,381 |
| 5 | Սեպավոր փական DN80, PN=1,0ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 58,249 | 58,249 |
| 6 | Սեպավոր փական DN50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 38,614 | 38,614 |
| 7 | Պողպատե կցաշուրթ DN80, PN=1,0ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 8,200 | 16,400 |
| 8 | Պողպատե կցաշուրթ DN50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 5,795 | 11,590 |
| 9 | Պողպատե խողովակների ձևավոր մասեր, մոնտաժումով | կգ | 2.40 | 1,790 | 4,297 |
| 10 | Պողպատե խողովակների և ձևավոր մասերի յուղաներկում 2 անգամ | մ² | 1.0 | 984 | 984 |
| 11 | Մետաղական ճաղավանդակ Փ6 A I ամրանից, տեղադրումով | կգ | 0.20 | 874 | 175 |
| 12 | Մետաղական ցանց Փ3Вр-I ամրանից, տեղադրումով | կգ | 0.20 | 950 | 190 |
| 13 | Պողպատե (St) DN89, DN57 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0.0130 | 92,007 | 1,196 |
| | *Ընդամենը 1 մասի* | | | | 294,975 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | 2. Աղբյուրակապ (շինարարական մաս) | | | | |
| | *Հիմքեր և հատակ* | | | | |
| 1 | Հիմքերի իրականացում B15, W4, F150 դասի բետոնով | մ³ | 0.70 | 88,766 | 62,136 |
| 2 | Նախապատրաստական շերտի իրականացում B15, W4, F150 դասի բետոնով | մ³ | 0.10 | 79,508 | 7,951 |
| 3 | Հատակի իրականացում B20, W4, F150 դասի բետոնով | մ³ | 0.150 | 82,503 | 12,375 |
| | *Պատեր* | | | | |
| 1 | Պատերի իրականացում B20, W4, F150 դասի բետոնով | մ³ | 1.30 | 103,656 | 134,752 |
| 2 | Ներդիր տարրեր, տեղադրումով | կգ | 38.0 | 665 | 25,269 |
| 3 | Մետաղական մտոց, տեղադրումով | կգ | 94.60 | 835 | 79,031 |
| 4 | Մետաղական կափարիչ, տեղադրումով | կգ | 60.80 | 835 | 50,794 |
| 5 | Ծխնի, տեղադրումով | հատ | 4 | 783 | 3,131 |
| 6 | Կախովի փականք, տեղադրումով | հատ | 2 | 2,349 | 4,697 |
| 7 | Կողային փողրակ, տեղադրումով | կգ | 4.20 | 745 | 3,129 |
| 8 | Պատյան խողովակ, տեղադրումով | կգ | 37.20 | 902 | 33,538 |
| 9 | Ցեմենտավազային շաղախ 100 դասի | մ³ | 0.0050 | 45,772 | 229 |
| 10 | Բիտումի մաստիկով ներծծված խծուծ | կգ | 3.50 | 1,957 | 6,850 |
| 11 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ² | 8.0 | 977 | 7,815 |
| | *Ընդամենը 2 մասի* | | | | 431,698 |
| | 3. Ցանկապատ (L=26,0 գծմ) | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Փոսորակի մշակում V կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ³ | 0.60 | 21,582 | 12,949 |
| 2 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում ձեռքով | մ³ | 0.60 | 1,070 | 642 |
| 3 | Հիմքերի իրականացում B15 դասի բետոնից | մ³ | 0.60 | 69,803 | 41,882 |
| 4 | Մետաղական կանգնակների կառուցում և տեղադրում փողկի հետ միասին | տ | 0.11380 | 77,534 | 8,823 |
| 5 | Մետաղական խողովակ 57x3 | մ | 23.50 | 2,546 | 59,841 |
| 6 | Մետաղական ներդիր տարրեր, տեղադրումով մետաղական թիթեղ, ամրան, անկյունակ | տ | 0.01980 | 330,364 | 6,541 |
| 7 | Ցանց N 50-2.5, տեղադրումով | մ² | 1.50 | 906 | 1,359 |
| 8 | Փշալար, տեղադրումով | մ | 234.0 | 249 | 58,200 |
| 9 | Ծխնի, տեղադրումով | հատ | 2 | 783 | 1,566 |
| 10 | Կախովի փականք, տեղադրումով | հատ | 1 | 2,349 | 2,349 |
| 11 | Մետաղական ցանկապատի յուղաներկում 2 անգամ | մ² | 4.0 | 1,474 | 5,894 |
| | *Ընդամենը 3 մասի* | | | | 200,045 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | 4. Ջրատար Ջ-1 | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 162.0 | 1,141 | 184,847 |
| 2 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ³ | 18.0 | 21,582 | 388,485 |
| 3 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 266.0 | 848 | 225,510 |
| 4 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ³ | 30.0 | 4,513 | 135,391 |
| 5 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 503.0 | 653 | 328,468 |
| 6 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ³ | 56.0 | 2,559 | 143,300 |
| 7 | Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 195.0 | 523 | 102,007 |
| 8 | Խրամուղու մշակում II կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ³ | 22.0 | 1,733 | 38,128 |
| 9 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում, h=10սմ հաստությամբ | մ³ | 56.0 | 4,969 | 278,263 |
| 10 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | մ³ | 179.0 | 3,600 | 644,485 |
| 11 | Գլաքարե շարվածք | մ³ | 7.0 | 6,376 | 44,632 |
| 12 | Խրամուղու եռլիցք կողալիցքի մշակված գրունտներից | մ³ | 1005.0 | 94 | 94,004 |
| 13 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում | մ³ | 247.0 | 94 | 23,104 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | | |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de90, PN=1.0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 780.0 | 3,049 | 2,378,524 |
| 2 | Պողպատե (St) էլ. եռակցվող խողովակներ DN89x3.5մմ, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 1.0 | 5,205 | 5,205 |
| 3 | Պողպատե DN89x3.5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում | գծմ | 1.0 | 454 | 454 |
| 4 | Պողպատե պատյան D=273x4մմ, մոնտաժումով | գծմ | 8.0 | 22,762 | 182,093 |
| 4 | Պողպատե պատյանի D=273x4մմ, նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում | գծմ | 8.0 | 5,298 | 42,382 |
| 5 | Պողպատե կցաշուրթ DN80, PN=1.0 ՄՊա, մոնտաժումով | հատ | 4 | 8,121 | 32,484 |
| 6 | Պոլիէթիլենե միջադիր de90, մոնտաժումով | հատ | 4 | 4,849 | 19,396 |
| 7 | Պոլիէթիլենե de90 (PE) խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0.780 | 83,157 | 64,862 |
| | *Ընդամենը 4 մասի* | | | | 5,356,023 |
| | 5. Դատարկման հոր Դ2-1 | | | | |
| 1 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 1.0 | 1,141 | 1,141 |
| 2 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 3.0 | 848 | 2,543 |
| 3 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 4.0 | 653 | 2,612 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 4 | Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով | մ$^3$ | 2.0 | 523 | 1,046 |
| 5 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից | մ$^3$ | 8.0 | 94 | 748 |
| 6 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում | մ$^3$ | 2.0 | 94 | 187 |
| 7 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de63, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 10.0 | 1,625 | 16,248 |
| 8 | Սեպավոր փականDN50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 38,382 | 38,382 |
| 9 | Պողպատե կցաշուրթ DN50, PN=1.0 ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 5,739 | 11,479 |
| 10 | Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ de90xde63, մոնտաժումով | հատ | 1 | 9,859 | 9,859 |
| 11 | Պոլիէթիլենե միջադիր de63, մոնտաժումով | հատ | 2 | 2,970 | 5,940 |
| 12 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում, h=10սմ | մ$^3$ | 0.30 | 8,959 | 2,688 |
| 13 | Ե/բետոնե կլոր հորի պատրաստում հավաքովի էլեմենտներից D=1,0մ, Hբ=1,5մ, (բետոն-0.69մ3,ամրան 48,8կգ-1հորի համար) թուջե կափարիչի և աստիճանի մոնտաժումով | մ$^3$ | 0.690 | 165,563 | 114,239 |
| 14 | Ցեմենտ-ավազային շաղախ M100 մակնիշի | մ$^3$ | 0.020 | 45,291 | 906 |
| 15 | Մետաղական աստիճան, տեղադրումով | կգ | 9.940 | 705 | 7,003 |
| 16 | Թուջե մտոց, տեղադրումով | հատ | 1 | 70,456 | 70,456 |
| 17 | Ներդիր դետալներ ե/բ հորի սեյսմակայունությունը ապահովելու համար, տեղադրումով | կգ | 28.740 | 774 | 22,234 |
| 18 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^2$ | 1.0 | 1,334 | 1,334 |
| | *Ընդամենը 5 մասի* | | | | 309,046 |
| | *Ամբողջը 1 - 5 մասերի* | | | | 6,591,788 |
| | *Ընդամենը ԱԱՀ - 20%-ով* | | | | 7,910,145 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՄՅՈՆՈՎԿԱ համայնք հասցեում:

| Պատվիրատու | Կապալառու |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Ժիլյո» Ա/Կ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | ՀՀ, ք.Երևան, Բագրատունյանց 69 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 02205353 |
| Հ/Հ՝ 900018001231 | Հ/Հ՝ 115004610859 |
| Կենտրոնական գանձապետարան | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն |
| Աշոտ Կիրակոսյան | Սերժիկ Ավագյան |
| | |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*«15» հոկտեմբեր 2019թ.*

*Հավելված թիվ 2*
*ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/68 ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՍՏՈՆՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՍՏՈՆՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | *Ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* | *110 օր տևողությամբ* |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | *Ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* | *110 օր տևողությամբ* |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ժիլո» Ա/Կ

ՀՀ, ք.Երևան, Բագրատունյանց 69
ՀՎՀՀ՝ 02205353

Հ/Հ՝ 115004610859
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Տնօրեն
Սերժիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> պայմանագրում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«15» հոկտեմբեր 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/68 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45231131/558 | Ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ժիլյո» Ա/Կ

ՀՀ, ք.Երևան, Բագրատունյանց 69
ՀՎՀՀ՝ 02205353

Հ/Հ՝ 115004610859
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Տնօրեն
Սերժիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*«  »  2019 թ. կնքված*
*ՀՇ-92-ԱՇՀԲ-2019/68 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  »  «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«  »  2019 թ. կնքված*
*ՀՄ-ԳՀ-ԱՇՀԲ-2019/68 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անուն Կապալառուի անուն
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«15» հոկտեմբեր 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/68 ծածկագրով պայմանագրի

# Գծագրերը կից

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ժիլյո» Ա/Կ

ՀՀ, ք.Երևան, Բագրատունյանց 69
ՀՎՀՀ՝ 02205353

Հ/Հ՝ 115004610859
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Տնօրեն
Սերժիկ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 6*
*«  » _____ 2019 թ. կնքված*
*ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/68 ծածկագրով պայմանագրի*

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հ/հ _____ | հ/հ _____ |
| հվհհ _____ | հվհհ _____ |

# ԱԿՏ
## ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  »_____ 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Սույնով Պատվիրատուն և ՀՀ, _____ մարզի _____ համայնքը, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ _____ պայմանագրի 3.2.3 կետի պահանջները, կազմեցին սույն ԱԿՏ-ը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ, _____ մարզի _____ համայնքի հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից *Նախագծով* նախատեսված տարածքը:

| Տարածքը հանձնեց | Տարածքն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 9*
*ՀՄ-92-ԱՇՁԲ-2019/68 ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «____»_____ 20 թ.**

Ժիլդ Ա/Կ ի դեմս Ընկերության տնօրեն Սերժիկ Ավագյան AM0747146 010 տրված է 30.05.2012թ.
* Ընկերության անվանումը Ընկերության անդամի անուն ազգանուն, անձնագրային տվյալներ

, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի ամրագրում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՄ-92-ՄՇՁԲ-2019/68* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը ապասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային

ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ժիլո ԱԿ

ընկերության անվանումը

ՀՀ, ք.Երևան, Բագրատունյանց 69

ընկերության հասցեն

Հայրիզնեբանկ ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

115004610859

ընկերության բանկային հաշվեհամարը

02205353

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Սերժիկ Ավագյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և առաջնորդությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրամերը տեղեկագրում հրապարակելը:
** լրացվում է մասնակցի կողմից

| |
|---|
| 1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ[1] |
| 1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ[2] |
| 2. Թիվ |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Ժիլյո» Ա/Կ |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 115004610859 |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02205353 |
| 8. Վճարողի ՀՄՀ՝ |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| 10. Շահառուի ՀՄՀ (չի լրացվում) |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00846441 |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ 900018001231 |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ 640 000 (վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)* |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ |
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ |

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |